

71. ԴԱՐՎԵԾԻ ՀԵՔԱԹ

Դարվեջ մե մըջ քաղքին կը գվռնեը ու վիռա-վիռա կըսեր.

— Ոն ինչ էնե, ուրի՛ն կէնե. աղեկութեն էնե, ուրի՛ն կէնե, դե-
շութեն էնե, ուրի՛ն կէնե:

Չար պառավ մը կըսե.

— Քու պատանք կարիմ, կեցի հմալ էնիմ, օր քու ձեն կտրի-
իմ անկըջեն: Ի՞նչ է յըմնօր կըսիս՝ «Ոն ինչ էնե, ուրի՛ն կէնե, ո՞ն
ինչ էնե, ուրի՛ն կէնե»:

Գելնա էրկու գաթա կը կողե, մեկի մեջ աղու կը թալե, կիտա-
դարվեջին, օր ուտե մեռնի: Դարվեջ գաթե մե կուտե, գմեկել գա-
թեն կը դնե ուր ծոցն ու քաղքեն գելնա դուս, քիչ մը կը հեռենա
քաղքեն, տղե մե ռաստ գիկա:

— Դարվեջ բարա, հեռու տեղեն գիկամ, անոթնե խուղումսի
կոտրեր է, ըսկի հաց կը գտվի՞ մոտդի,— կը հարցու տղեն:

— Օ՛րդի,— կըսե դարվեջ,— պառավ մե երկու գաթա տվեց
ընձի, մեկ կերեր իմ, կշտացեր իմ, մեկել գաթեն լե քըզի: Ես դար-
վեջ մարդ իմ, չուտեն էղնի իմ ձեռք հաց գընկնա:

Տղեն գգաթեն կառնե ու ուտելով կէրթա, հարի կը հասնի տուն,
սանջուն կը զարկե փոր, խուղում կը կոտրի, գընկնա ջլեր:

— Ի՞նչ էղավ քըզի, լա՛ո,— կը հարցու պառավ:

— Մա՛մո,— կըսե տղեն,— ճամպուց օր գիկենք. անոթցեք:

Ենք, դարձեղ մե ուստ էկավ, հաց չուզեցի, գաթե մե տվեց կերա,
էղա հմլա:

— Վա՛յ,— կը ճշա պառավ,— իմ տված գաթեն իս կերի:

Մեկ-էրկու սհաթ չետե տղեն կը մեռնի, պառավ զշոքեր կը
տփե, գիլա, կըսե.

— Օղորդ է դարձեցի ըսած. «Ոն ին, էնե, ուրի՛ն կէնե»:

